

ՌՃԼԱ (= 1682) թուականը, «յօր վարդավառի» (Յաւել. էջ 467), որ կը հանդիպի նոյն տարուան Յուլիս 23ին: Անոնցմէ առաջինով կը գուժէ՝ իր 14 ամսուան Յովսէփ որդեկին այնինչ վախճանիլը: Երկրորդը կը վերաբերի իր միջնեկ եղբօր Տէր Մարտիրոսի աւագութեան խնդրին: Երրորդը և չորրորդը կը պարունակեն հայրական խրատներ: Այդ նամակները երեւան կը բերեն Երեմիայի գորովագին սէրը գէպի իր զաւակները, իր բարձր ու ազնուական հոգին և խոր հմտութիւնը Ս. Գրոց մէջ: Անոնք համեմուած են հայրական սրտաբուխ յորդորներով, սուրբզրական ճոխ վկայութիւններով և առածներով ու օրինակներով: Ունին զուարթ ու սահուն ընթացք մը, ինչ որ ընդհանրապէս յատկանիչն է Երեմիայի ոճին, ու անմիջապէս կը մատնէ գինք իր արձակ ու ոտանաւոր բուլոր զրութեանց մէջ, ըլլան անոնք զրաբար թէ աշխարհաբար և կամ թուրքերէն:

Երեմիա 1685ին կ'ուղևորի Էջմիածին ի տես իր որդւոյն՝ Գրիգորիս վրդ.ի, բայց զայն չի գտներ հոն, վասնզի նա ևս հօրը կարօտէն ձգուած ցամաքէն մեկնած էր Կ. Պոլիս⁽¹⁾, հանդիպելով Կարին, Ակն, Երզնկա և Գաղատիա: Յիշեցինք վերև (էջ ԿԴ) թէ Երեմիա իմանալով Գրիգորիս վարդապետի Կ. Պոլիս երթալը՝ յանձնարարական գիր մը կ'ուղղէ Գաղատիոյ առաջնորդին՝ խնդրելով որ երբ անիկա հոն հանդիպի՝ իր բարի ակնարկը վրայէն պակաս չընէ ու հարազատ պէս վարուի անոր հետ, «որպէս արարին նմա զընդունելութիւն Ակնայ և Եզնկու մանաւանդ թէ Կարնոյ երևելիքն ընդ առաջագործօք իւրեանց, յորոց գոհաբան եղէ յերկինս և յերկրի» (Յաւել. էջ 471):

Գրիգորիս վարդապետ վերստին կը դառնայ Էջ-

(1) Հ. Ն. Ակինեան, ԶԼԷպի, էջ 53: